

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Մասնագիտական տերմինաբանության համակարգի կառուցման տեսական հիմունքների ու մեթոդիկայի մշակումը հանդիսանում է լեզվաշինարարության մշակույթի կենսական պրոբլեմը: Տերմինաբանության համակարգի գիտական ուսումնասիրման հարցերի կոմպլեքսի մեջ մտնում են հետևյալ հանգուցային հարցերը.

առաջին, տերմինաբանության համակարգի արդի վիճակի քննումը, հաշվի առնելով նաև տերմինաբանական տրադիցիաներն ու տենդենցները.

երկրորդ, տերմինաբանական համակարգի տիպիկ թերությունների հայտնաբերումը.

երրորդ, տերմինակազմության հիմնական արդյունավետ եղանակների հետադրումը.

չորրորդ, տերմինաստեղծությունը, այսինքն նոր հասկացությունների տերմինավորումը.

հինգերորդ, մասնագիտական տերմինաբանության համակարգի ռացիոնալացումն ու միասնականացումը:

Մասնագիտական բառարաններ կազմելու հարցը անխզելիորեն շաղկապված է վերոհիշյալ կետերի լուրջ ուսումնասիրման հետ, քանի որ միայն տերմինաբանական համակարգի բազմակողմանի քննումը հնարավորություն կստեղծի բառարանագրական աշխատանքի համար մշակել գիտական հիմքի վրա խարսխվող սկզբունքներ:

Որքան էլ հարուստ է հայ բառարանագրությունը ընդհանուր թարգմանական բառարաններով, և որքան էլ անշնորհակալ կլինենք, թե՛րևս, նույնիսկ անարդարացի, առարկել նրանց արժեքի ու պիտանիության դեմ, այնուամենայնիվ հաստատապես կարելի է արձանագրել այն անհերքելի փաստը, որ ոչ մի ընդհանուր բառարան չի ընդգրկում (և չի էլ կարող ընդհանրապես բավարար չափով ընդգրկել) որևէ մասնագիտական տերմինաբանություն: Հենց այստեղից էլ բխում է մի անհրաժեշտ կարիք՝ կազմելու ու հրատարակելու մասնագիտական, թարգմանական տիպի բառարաններ:

Մեր կարծիքով այն հիմնական, ելակետային դրույթները, որոնցով պետք է ղեկավարվել մասնագիտական տիպի բառարանների սկզբունքները մշակելու համար հետևյալներն են.

1. Մասնագիտական տերմինաբանության գոյալուրդում: Ամբողջ աշխատանքը պետք է

սկսվի տերմինաբանության արդի վիճակի քննությամբ, տերմինների առկայության հայտնաբերմամբ ու ստուգումով փաստական նյութի հիման վրա, մի նյութ, որ պետք է քաղվի հեղինակավոր մասնագիտական աշխատություններից: Տերմինների զբանցումը նպատակահարմար է կատարել միաժամանակ երկու ձևով. առաջին, տերմինների ցուցակագրում ըստ առանձին աղբյուրների: Նմանօրինակ զբանցումը ակնառու կերպով լուսաբանում է զործածած տերմիններն ըստ յուրաքանչյուր առանձին վերցրած աղբյուրների, երկրորդ, որպես համահավաք քարտաքան, որը առանց կրկնությունների պետք է պարունակի բոլոր ըստ առանձին աղբյուրների ցուցակագրված տերմինները: Այդ համահավաք քարտաքանը պետք է դասավորել խիստ այբբենական կարգով:

Արդեն մասնագիտական զբանցությունից լայն չափով տերմիններ քաղելու ու համահավաք քարտաքան կազմելու ընթացքում ակնհայտորեն հայտնաբերում են փաստեր, որոնք որոշ դեպքերում վկայում են տերմինաբանական համակարգում հանդիպող թերությունների մասին: Մանրազնին ուսումնասիրության արդյունքը առավորաբար լինում է այն, որ հայտնաբերված թերությունները ըստ իրենց բնույթի տիպիկ ու ընդհանուր են առհասարակ տարբեր տերմինաբանական համակարգերի համար: Որո՞նք են մասնագիտական զբանցության մեջ հանդիպող տիպիկ տերմինաբանական թերությունները.

ա) տերմինի զործածության ոչ-միօրինակություն ու անկայունություն,

բ) տերմինի նշանակության աղավաղում կամ շփոթում.

գ) տերմինի համարժեքի փոխարինումը բացառությամբ կամ նկարագրությամբ,

դ) տերմինի բացակայություն,

ե) տերմինի համանունություն ու բազմանշանակություն,

զ) այլալեզու ներառումներ:

2. Տերմինների ընտրություն. տերմինացանկ ու բաղադրյալ տերմինների դասավորում: Տերմինների ընտրությունը, տերմինացանկը ու բաղադրյալ տերմինների դասավորումը հանդիսանում են մասնագիտական բառապաշարի բառարանագրական մշակման կարևոր կողմերը: Տերմինների ընտրությունը չպետք է կատարվի

խառնաշփոթ, այլ հետեւողականորեն ու համակարգված կոմպլեքսային ընտրութեան հիման վրա, հաշվի առնելով համարժեք բյին տարբերակներն ու բաղադրյալ տերմինալազմութիւնները:

Տերմինաբանական գլխաբառերը ու բառահոգովածները պետք է լայնորեն շնորհակցեն ու ներկայացնեն տվյալ գիտութեան զծով հնարավորին շափ բոլոր գոյութիւնն ունեցող ու գործածովող տերմինները: Տերմինի հանրագործածութիւնը, մասնագիտական և ուսումնական գրականութեան մեջ տարածված լինելը հուսալի չափանիշ է այն բառարանի տերմինացանկը մտնելու համար: Տերմինացանկում ընդունված տերմինը այսպիսով տառնում է գործածութեան համար անհրաժեշտ, հանրաճանաչ ու հանձնարարելի տերմինի արժեք: Այս տեսակետից միանգամայն զգուշ մոտեցում են պահանջում տերմինային համարժեքներն ու ուղղագրական տարբերակները:

Տերմինաբանական բառահոգովածի ծավալը որոշում է տերմինի գործածութեան չափով: Ամեն մի գիտութեան մեջ կան մի կողմից որոշ կարևոր տերմիններ, որոնք դառնում են ածանցավոր, բարդ, բարդ ածանցնավոր ու բաղադրյալ տերմինների միջուկ, մյուս կողմից կան տերմիններ, որոնք կարող են ներկայացվել բառարանում որպէս ավելի համառոտ բառահոգովածով կամ սոսկ թարգմանութեամբ:

Ինչպէ՞ս լուծել բաղադրյալ տերմինների դասավորման հարցը: Ինչպէս հայտնի է, բաղադրյալ տերմինը բաղկացած է, որպէս կանոն, մեկից ավելի բաղադրամասերից: Արդյոք բավարար կլինի՞, եթէ բառարանում բաղադրյալ տերմինը բաղադրամասերից մեկի տակ դետեղվի, իսկ մյուս բաղադրամասի տակ տրվի միայն հղում: Անմիջապէս հարց է ծագում, թե ո՞ր բաղադրամասի տակ պետք է բերվի բաղադրյալ տերմինը: Մեզ թվում է, թէ բաղադրյալ տերմինի կրկնակի կամ եռակի զետեղումը յուրաքանչյուր բաղադրամասի տակ միանգամայն արդարացիում է հետեւյալ նկատառումներով. առաջին, յուրաքանչյուր առանձին վերջրած տերմինի գործածութեան ոլորտը լուսաբանվում է ակնառու կերպով, երկրորդ, սխալ թարգմանութեան հնարավորութիւնը կանխվում է այն դեպքում, երբ տվյալ բաղադրյալ տերմինը ուրիշ լեզվով թարգմանվում է ոչ թէ համապատասխանորեն բաղադրյալ տերմինով, այլ պարզ կամ բարդ տերմինով, երրորդ, բաղադրյալ տերմինի կրկնութիւնը ավելի

է դուրացնում բառարանից օգտվելը քան հղումը:

3. Տերմինաբանական համաժնեայնութիւն: Մասնագիտական, թարգմանական բառարաններում երբեմն հանդիպում ենք այս կամ այն տերմինի թարգմանութեան մեջ թերութեան: Այստեղ գլխավորապէս լինում են երկու տեսակի թերութիւններ, կամ տերմինը չի տրվում, աղավաղվում է, կամ էլ համարժեքի փոխարեն տրվում է բացատրութիւն կամ նկարագրութիւն: Թարգմանութեան տերմինաբանական համարժեքայնութիւնը դա մասնագիտական թարգմանական տիպի բառարանի անխախտելի սկզբունքն է: Յուրաքանչյուր տերմին պետք է թարգմանվի մի ուրիշ լեզվով համարժեքի միջոցով, ըստ որում թույլատրվում է տերմինը թարգմանել պարզ, ածանցավոր, բարդ ածանցավոր ու բաղադրյալ տերմինով: Թարգմանութեան ժամանակ այս կամ այն տերմինի բացակայութեան դեպքում պետք է ստեղծել նրա համարժեքը տերմինաբանական համակարգի համաձայն, օգտվելով բառապաշարի անսպառ աղբյուրից ու արդյունավետ բառակազմական կաղապարներից: Առանձին դեպքում, երբ հնարավոր չի լինում թարգմանելու կամ բառապատճենելու որն է տերմին, պետք է դիմել ուղղակի փոխառութեան, պահպանելով գոյութիւնն ունեցող տառադարձութեան կանոնները:

4. Տերմինաբանական նորմալում: Մասնագիտական, թարգմանական տիպի բառարանների կազմումն ու հրատարակումը պետք է անխղճիորեն շարկապի տերմինաբանութեան և ուղղագրութեան հարցերի ռացիոնալացման, միասնականացման ու նորմալումման հետ: Իսկ կարևոր սկզբունքային պայման է, որի լուծման համար ինչպէս ոչ մի ուրիշ հարցում ստիպողական անհրաժեշտութեամբ պահանջվում է միևնույն գիտութեան տարբեր ճյուղերի մասնագետների համատեղ աշխատանքը: Ընդ նպատակով կարևոր է ոչ միայն առանձին մասնագետների ներգրավում, այլև անհրաժեշտ է անցկացնել ազատ գիտութեան պարբերական մամուլում և լուսաբանել աշխատանքի արդյունքները:

5. Մասնագիտական թարգմանութեան փոքրիկ ու պրակտիկայի հաշվառումն ու օլտագործումը: Գիտական և ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, մենագրութիւնների, ծրագրերի, ինքնառնձերատեսերի, ամսագրային հոգովածների, ամփոփումների ձևով թարգմանաբար լույս ընծայվող մասնագիտական գրականութեան թարգմանչական ամբողջ դրական փորձի ու պրակտիկայի ուշադիր ուսումնասիրումն ու նպա-

տակահարմար օգտագործումը վերին աստիճանի կարևոր հանգամանք է:

6. Ուսումնական պահանջները բավարարումը: Քանի որ մասնագիտական, թարգմանական տիպի բառարանը հանդիսանում է գործնական ուսումնական ձեռնարկ, ապա նրանում պետք է պահպանվեն որոշ պահանջներ, որոնք ներկայացվում են բառարանագրական ուսումնական ձեռնարկներին: Այդ նպատակին կարելի է հասնել պահպանելով հետևյալ պայմանները.

ա) ոչ միայն տերմինաբանական զլխաբաներ, այլև բառահոգովածի տերմինակապակցությունների խիստ այբբենական կարգի դասավորում:

բ) տերմինաբանական զլխաբանների քերականական բնութագրության բառափոխական ձևերի նշանակում: Նույնը կատարել նաև բառարանի թարգմանական մասում համարժեքների վերաբերյալ.

գ) բառափոխության նշաններ, թվերի միջոցով նշանակումից հրաժարում հօգուտ կոնկրետ տառային նշանների.

դ) փոփոխական շեշտով լեզուները, օրինակ,

ռուսերենը որոշ դժվարություններ է ներկայացնում ոչ-ռուսների համար շեշտադրման տեսակետից: Հետևաբար շեշտի նշանակումը կօժանդակեր տերմինի ճիշտ յուրացման ու արտասանմանը:

7. Պարբերական վերանայում և համալրում: Գիտությունը զարգանում է, կատարելագործվում, որի հետևանքով առաջանում են տերմինների միջոցով արտահայտվող նոր հասկացություններ: Այդ նոր տերմինները անհրաժեշտ է սխտեմատիկաբար ու խնամքով հավաքել բառարանագրական մշակման ու արձանագրման համար: Մյուս կողմից նորակազմ տերմինները պետք է քննել տվյալ լեզվի նորմայի համապատասխան ռացիոնալացման ու միասնականացման պլանով, հայտնաբերելով գործածության նեղ ոլորտը, տարբերակելով նշանակությունը ու վերացնելով տարբերակները:

Ահա ընդհանուր առմամբ մասնագիտական տերմինաբանության բառարանագրական մշակման սկզբունքների մեր տեսակետը:

ՄԻԲԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱՆՑ

ՏՆԵՏԱՅՊԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Մենք ամեն օր թերթերում հանդիպում ենք «տեխնոլոգիական ժապավենից» արտահայտությանը: Բայց ի՞նչ բան է տեխնոլոգիա? Դա ավտոմատ կերպով շարող մեքենա է, որը միաժամանակ շարվածքը հաղորդում է տարանջամային վրա:

Տեխնոլոգիայի լրիվ կոմպլեկտը բաղկացած է 5 առանձին ապարատներից.

ա) ժապավենի ծակող սարք: Մի շատ նման է գրամեքենայի: Գրաշարը այդ մեքենայի ստեղծների վրա անընդհատ շարվածք է կատարում, առանց միջանկյալ աշխատանքի: Տասնամատ աշխատանքի մեթոդով տեխնոլոգիա սովորական լինոտիպից զգալի չափով արագ է շարում: Ծակող սարքի վրա հնարավոր է կատարել ժամում 300 հարված կամ ժապավենի վրա բացել 54 հազար անցք:

բ) այդ ժապավենի ազդանշանների հաղորդիչ (տրանսմիտեր): Ծակող ժապավենի ազդանշանները վերածելով էլեկտրոնային իմպուլսի, տրանսմիտերը ժապավենի բովանդակությունը հաղորդում է տարածության մեջ՝ լարային կամ ոչ լարային միջոցներով (Գերմանիայում օգտագործվում է պետական հեռագրական ցանցը), Հաղորդիչը հնարավորություն ունի մի կենտրոնական կայանից հաղորդելու մի քանի տեղ:

գ) ծակող ժապավենի ազդանշանների ընդունիչ, որի միջոցով նախօրոք բացված բոլոր անցքերով կատարվում է էլեկտրական իմպուլսների ընդունումը և նրա փոխադրումը թղթի ժապավենի վրա:

դ) ստեղծների ավտոմատ նախագիծ: Կատարում է ընդունիչի ֆունկցիա: Նա միանում է շարող մեքենայի ստեղծաշարին և ժապավենի ազդանշանները հաղորդում է ավտոմատ շարվածք կատարող լինոտիպին:

ե) արագաշար մեքենան, որը ղեկավարվում է ծակող ժապավենի ազդանշանով և միաժամանակ ձուլում է տառերը: Աշխատանքի ըսկզբունքը նույնն է, ինչ լինոտիպին:

Այս մեքենայի շնորհիվ է, որ երկրից-երկիր են հասնում թերթերի հաղորդագրությունները: Նույնիսկ ամբողջ թերթի բովանդակությունը: Այժմ էլեկտրոնային «լինոտիպ» գործարանն արտադրում է այդ տիպի մեքենա:

Շարվածքային տեխնիկան զնալով ավելի է կատարելագործվում: Էլեկտրոնիկայի ներդրումը ավտոմատ մեքենաների մեջ հնարավորություն է տալիս վայրկյանում շարելու 1000 նիշ կամ ժամում 60 հազար նիշ, որը սովորական լինոտիպի 7-ժամյա աշխատանքային նորման է, այն էլ՝ մաքսիմումը:

2. ԳՈՐՈՅԱՆ